ԲՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Լափոններու վրայ տեղեկութիւն :

ԼԱՓՈՆԻԱՆ Եւրոպայի հիւսիսային կողմը ընդարձակ երկիր մըն է, ու իրեք մաս կը բաժնուի. մէկ մասը Նորվեկիայի մէջ է, մէկալը Շուետի, երրորդը որ աւելի ընդարձակ է՝ Ռուսաստանի մէջ: Բնակիչներուն թիւը 12 հազարի չափ է. ասոնցմէ ոմանք կռապաշտ են, ոմանք լուտերական, ոմանք ալ յունադաւան: Իրենք զիրենք սամ կամ սօ կ'անուանեն, ու կը կարծուի թէ ասոնք Ֆինլանտիայէն քշուած են հոն. վասն զի իրենց լեզուովը չէ քշուած բոլոր է :

Ընդհանրապէս կարճահասակ են Լափոնները ու նիհար, երեսնին տափակ ու լայն, մազերնին կարճ սեւ ու սաստիկ թաւ, գոյներնին պղնձագոյն, աչուըննին կապոյտ՝ մանր ու կարճատես, ականջնին պզտիկ, քթերնին տափակ ու կարճ, շրթունքնին թանձր, մորթերնին թուխ ու եղոտ, մորուքնին նօսր, կուրծքերնին լայն, փորերնին խոր ու ներս մտած, ձայներնին սաստիկ սուր ու անախորժ. աղէկ վազուկ ըլլալով՝ սուրհանդակութեան յարմար են : Քաղաքականութեան

կողմանէ շատ տգէտ ու անկիրթ են, թէպէտ և քովի ազգերուն հետ վաճառականութիւն կ՚ընեն. կեանքերնին ալ խիստ կարճ է, վասն զի օղի շատ կը խմեն. բնութեամբ ուրախ զուարթ ու սրամիտ են, ուժով ու արագաշարժ, և ընդհանրապէս հիւրասէր: Իրենց գլխաւոր արհեստներն են հովուութիւն ու ձկնորսութիւն. ուստի հարստութիւննին ալ է եղջերու և ուրիշ ընտանի անասուններ: Խիստ աղքատները շատ անգամ կ՚ելլեն իրենց դաշտերէն կ՚իջնան գեղերն ու քաղաքները, ու գեղացիներու քով կը ծառայեն, ոմանք ալ կը մուրան: Իսկ որոնք որ ամառը թափառական ալ պտըտելով՝ քիչ մը ստակի տէր կ՚ըլլան, ձմեռը կ՚երթան ջուր ու փայտ գտնուած տեղեր՝ իրենց տընակը կը շինեն հողով ու ծառի ճիւղերով. քանի մը եղջերու և ուրիշ անասուններ կը գնեն ու կ՚ապրին. Իրենց լեզուն, սովորութիւններն ու հագուստը օտար երկիր ալ երթան՝ չեն փոխեր: Ինչափ սէր ունին իրենց հայրենեացը վրայ որ եթէ յանկարծ անկէ հեռանան, սրտերնուն ցաւէն կը հիւանդանան ու կը մեռնին ալ:

Լապոններուն սովորական կերակուրը եղջերուի միս ու կաթ է. հագուստնին ալ նոյն կենդանւոյն մորթն է. միայն թէ ամառը կաշին կը հագնին, այսինքն նոյն մորթին գերծածը. եղջերուի ոսկորներէն կը շինեն իրենց գդալները, եղջիւրներն ալ ատենով իրենց կուռքերուն ընծայ կ՚ընէին: Ով որ հազար գլուխ եղջերու ունի, մէջերնին խիստ հարուստ կը սեպուի. հարիւր ունեցողը միջակ, անկէ պակաս ունեցողը աղքատ: Տեսնելու բան է իրիկուան դէմ Լապոններուն իրենց եղջերուներովը տուն դառնալն ու զանոնք կթելը. ան կենդանիներուն սիրուն տեսքը, վառվըռուն շարժմունքները, ցատքըռտելները, ռուըններնուն փըռտոցը, նմանապէս իրենց տէրերուն ան միջոցին ցցուցած ուրախութիւնն ու գործունէութիւնը շատ զուարճալի տեսարաններ են:

Լափոնիային քիչ կողմերը մշակուած են. եղած բերքն ալ գարի է, քիչ մըն ալ գետնախնձոր, կաղամբ և ուրիշ բանջարներ: Ամառը 70 օր է հոն, և օրը 20 ժամ է. իսկ աւելի հիւսիսային կողմերը երկու ամիս է գիշերը. բայց ան ձանձրալի գիշերուան մթութիւնը քիչ մը կը փարատի լուսնին ու հիւսիսայգին լուսովը որ ձեան երեսէն կ՚անդրադառնայ: Ամառն ալ երկու ամիս միակերպ ցորեկ կ՚ըլլայ. այսինքն արեւը հորիզոնին վրայ կամ քիչ մը վեր ու վար՝ կլոր կը պտըտի, ու առանց բոլորովին մտնելու՝ հիւսիսային կողմէն նորէն դէպ 'ի արեւելք կը դառնայ. և սակայն բնակիչները գրեթէ 20 ժամ աշխատելէն ետեւ՝ 9 ժամի չափ ալ կը քնանան. սակայն երկու ամիս գիշեր եղած ատենը 12 ժամ կը քնանան, ու 12 ժամ ալ կ՚ելլեն կրակ կը վառեն՝ գլխացը կը նստին. ուրիշ աշխատանք մը չեն ըներ ան միջոցին: Այս երեւոյթիս պատճառը հասկընալը դիւրին է: Արեւուն լոյսը երբոր աշխարհիս ո՛ր և իցէ կողմին վրայ շիփշիտակ որ զարնէ, անկէ մինչեւ 90 աստիճան՝ այսինքն 5400 մղոն տեղ լոյս կու տայ: Ուստի երբոր արեւը հասարակածին վրայ է, երկրիս բեւեռներէն հաւասարապէս հեռու ըլլալով՝ հաւասար լոյս կու տայ երկու բեւեռներուն ալ, ինչպէս որ կ՚ըլլայ գարնան ու աշնան: Բայց ամառը երբոր աւելի դէպ 'ի հիւսիս կը խոտորի, բոլոր հիւսիսային երկիրները արեւուն լոյսը կը վայելեն միակերպ, ու հարաւային երկիրները մութ կը մնան. նմանապէս ձմեռը երբոր դէպ 'ի հարաւ խոտորի, հիւսիսային կողմերը հարկաւ գիշեր կ՚ըլլայ մինչեւ երկու ամիս: